ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 փետրվարի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

24
(2874)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ԿԵՂԾԻ՞Ք ԿԱ



Բ.2. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑ

Բ.2.1. Տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտի միջոց

Մակնիշը, սերիան	Թողարկման տարին	Նույնականացման համարը	Տրանսպորտի միջոցը ձեռք բերելու օրը, ամիսը, տարին
FORD Պաշտպանված	2018	Պաշտպանված	21/01/2022

Բ.2.2.2. Տվյալ տարվա ընթացքում օտարված տրանսպորտի միջոց

Մակնիշը, սերիան	Թողարկման տարին	Նույնականացման համարը	Տրանսպորտի միջոցն օտարելու օրը, ամիսը, տարին	Տրանսպորտի միջոցն օտարելու եղանակը	Տրանսպորտի միջոցի գինը(արժեքը) և արժույթը
FORD Պաշտպանված	2019	Պաշտպանված	18/06/2022	Վաճառք	$ 13,000

Բ.2. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑ

Բ.2.1. Տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտի միջոց

Տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտի տեսակը	Մակնիշը, սերիան	Թողարկման տարին	Նույնականացման համարը	Տրանսպորտի միջոցը ձեռք բերելու օրը, ամիսը, տարին	Տրանսպորտի միջոցը ձեռք բերելու եղանակը
Մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոց	FORD Պաշտպանված	2018	Պաշտպանված	21/01/2022	Գնում

Բ.2.2.1. Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված տրանսպորտի միջոց

Մակնիշը, սերիան	Թողարկման տարին	Նույնականացման համարը	Տրանսպորտի միջոցը ձեռք բերելու օրը, ամիսը, տարին	Տրանսպորտի միջոցի ձեռքբերման եղանակը	Տրանսպորտի միջոցի ձեռքբերման գինը(արժեքը) և արժույթը	Գործարքի մասս կոդի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն
FORD Պաշտպանված	2018	Պաշտպանված	11/01/2022	Գնում	դ 4,000,000	Սվինյան Դավիթ Պաշտպանված

Բ.2.3. Տվյալ տարվա վերջում առկա տրանսպորտի միջոց

N ՀՀ	Հարարարատու սեփականատիրոջ անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ տարվա վերջում առկա տրանսպորտի տեսակը	Մակնիշը, սերիան	Թողարկման տարին	Նույնականացման համարը	Տրանսպորտի միջոցը ձեռք բերելու օրը, ամիսը, տարին	Տրանսպորտի միջոցը ձեռք բերելու եղանակը
1.	ԼՈՒԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ	Մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոց	FORD Պաշտպանված	2018	Պաշտպանված	21/01/2022	Գնում
2.	ԼՈՒԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ	Մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոց	FORD Պաշտպանված	2018	Պաշտպանված	11/01/2022	Գնում

Ուսումնասիրելով պաշտոնատար անձանց հայտարարագրերը՝ հաճախ ենք առնչվում անճշտությունների, կոռուպցիոն ռիսկեր պարունակող տվյալների, ինչպիսիք են, օրինակ, միլիոնավոր կանխիկ դրամական միջոցները, որոնց աղբյուրները նշված չեն, մեկ օրում մի քանի տուն գնելու փաստերը եւ այլն: Այս անգամ թիրախում է Երեւանի ավագանու իշխող խմբակցության անդամ Նուարդ Վարդանյանը, որը Ford մակնիշի ավտոմեքենայի առուվաճառքի մեջ է: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանի Վարդանյանի հայտարարագրերը առաջացնում են հարցեր, բայց ոչ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մոտ: Այսպես, Վարդանյանը 2021թ. հայտարարագրում նշում է, որ 2022 թվականին ձեռք է բերել 2018 թվականի արտադրության Ford մակնիշի մեքենա, ինչը գուշակության ոլորտից է: Նույն 2021թ. հայտարարագրի համաձայն՝ Վարդանյանը Տիգրան Ավինյանի եղբայր Դավիթ Ավինյանից ձեռք է բերել եւս մեկ Ford՝ 2018 թվականի արտադրության, եւ տարվա վերջի դրությամբ հայտարարագրել է 2 Ford մակնիշի մեքենա: 2022թ. սկզբում ոչ միայն «անհետանում է» Ford-երից մեկը, այլեւ վաճառքից առաջ փոխվում է մյուս Ford-ի տարեթիվը՝ 2018 թվականի արտադրությունը դառնում է մեկ տարով նոր՝ 2019 թվականի արտադրության: Հետաքրքիր զուգադիպությամբ ՔՊ-ականների գրեթե բոլոր ձեռքբերումները (բնակարան, ավտոմեքենա, հագուստ, այլ) արձանագրվել են 2018թ. իշխանափոխությունից հետո: Ստացվում է, որ Նուարդ Վարդանյանը իրեն պատկանող Ford մակնիշի մեքենան, որը ձեռք է բերել 2018 թվականին 4 մլ դրամով՝ գրեթե 10 հազար ԱՄՆ դոլար, 2022 թվականին վաճառել է 13 հազար ԱՄՆ դոլարով որպես 2019 թվականի արտադրության մեքենա: Ըստ հայտարարագրի՝ Վարդանյանը 3 հազար ԱՄՆ դոլարի օգուտ է ստացել եւ փոխել մեքենայի արտադրման տարեթիվը: «Ժողովուրդ» օրաթերթը կապվեց ՔՊ խմբակցության ավագանու անդամ Նուարդ Վարդանյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչպես է այդպես ստացվել: «Ընդհանրապես էդ հայտարարագիրը ոտքից գլուխ ամբողջը սխալ է: Ես իրենց (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) նամակով էլ եմ դիմել, որ ուղղեն: Իրենք չեն ուղղել, եւ դա իմ սխալմունքը չէ: Խնդրում եմ, իրենց հետ կապվեք, որովհետեւ մի տունն էլ, որ ունեմ Կենտրոն վարչական շրջանում, երեք անգամ նույն բանը նշված է: Դիմել եմ իրենց, ասացին՝ Ձեզ կոդ կուղարկենք, համակարգի սխալ է եղել, Դուք կուղղեք: Այդ կոդը մինչեւ հիմա չեն ուղարկել: Ես չեմ կարող իրենց փոխարեն պատասխանել»: Ինչպես միշտ, բոլորը մեղավոր են, բացի ՔՊ-ականներից:

Նիկոլ Փաշինյանը առաջիկայում փակ հանդիպում է նախատեսում ունենալ ՔՊ խմբակցության պատգամավորների հետ: Փաշինյանը օրենսդիրի իր թիմակիցներին ներկայացնելու է միջազգային վերջին այցերի՝ մյունխենյան բանակցությունների եւ Փարիզում ունեցած հանդիպումների արդյունքները: Ինչպես մեզ ՔՊ-ից հայտնեցին, միջազգային կարեւոր այցերից հետո սովորաբար հանդիպում են Նիկոլ Փաշինյանի հետ՝ ամփոփելու արդյունքները. այս անգամ էլ բացառություն չի լինի: ՔՊ-ականները հատկապես սպասում են Մյունխենում կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հանդիպման արդյունքներին, քանի որ մեծ սպասումներ ունեն դրանից: Իշխանականները նաեւ մեզ հայտնեցին, որ հանդիպման օրը դեռ հստակեցված չէ. կախված է վարչապետի գրաֆիկից. սպասում են:

Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանի եւ նրա շրջապատի նկատմամբ սկսված իշխանական արշավն իր արմատներն ունի: «Ժողովուրդ» օրաթերթը իր լավատեղյակ աղբյուրներից պարզեց, որ 2023 թվականի աշխատանքային վերջին օրերին Սամվել Շահրամանյանը Նիկոլ Փաշինյանին է ուղարկել Արցախի Հանրապետության լուծարման փաստաթուղթը չեղարկելու որոշումը՝ այդպիսով հայտարարելով, որ Արցախի Հանրապետությունը դե յուրե գոյություն ունի: Լուրի հավաստիությունը ճշտելու համար փորձեցինք կապ հաստատել նաեւ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանի հետ, սակայն վերջինս Նիկոլ Փաշինյանի հետ Փարիզ գործուղումների էր, զանգերին չպատասխանեց: Բնականաբար, Սամվել Շահրամանյանի կայացրած որոշումը եւ դրա ուղարկելու քայլը վրդովեցրել է Նիկոլ Փաշինյանին եւ նրա արցախատյաց թիմակիցներին: Նրանք համարում են, որ Արցախը Ադրբեջանի մաս ճանաչելով եւ հանձնելով՝ կարող են փրկել Հայաստանի Հանրապետության 29.800 քառակուսի կիլոմետր տարածքը, սակայն դա էլ չի հաջողվում: Ավելին՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը շարունակում է տարածքային նոր պահանջներ ներկայացնել Հայաստանի նկատմամբ՝ 8 գյուղեր, անկլավային այլ տարածքներ, ինչպես նաեւ 2021թ.-ից օկուպացված է պահում Սյունիքի ու Գեղարքունիքի հատվածներից Հայաստանի մոտ 127 քառակուսի կիլոմետր տարածք: Այսինքն՝ Արցախը զոհաբերելով՝ Հայաստանը ոչինչ չի շահել, այլ կորցրել է: Ապագայում սպասվելիք դժվարությունները, հարձակումներն ու ագրեսիաները որեւէ կողմի վրա բարդելու համար (որեւէ կերպ չի դիտարկվում Ադրբեջանը) Նիկոլ Փաշինյանը նոր մեղավորներ է փնտրում եւ, ահա, գտել է. Արցախի ղեկավարությունն է Հայաստանում: Հրահանգված է Արցախի նախագահի շուրջ հնարավորինս սեղմել օղակը, եւ առաջիկայում տարբեր թիրախավորումների ականատես կլինենք:

Արդեն մի քանի օր է, ինչ ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը հրապարակային կասկածի տակ է դնում ՀՀ իրավապահ մարմինների՝ Հակակոռուպցիոն կոմիտեի, Գլխավոր դատախազության գործունեության պրոֆեսիոնալիզմն ու օբյեկտիվությունը՝ նշելով զոհերի մասին, ասելով, թե վիուկների որս չպետք է լինի: Ավելին՝ երեկ հայտարարել է. «Քանի որ մամուլը վերջին օրերին բազմաթիվ անգամներ անդրադարձավ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հարուցված եւ դատախազության կողմից հաստատված հերթական անհիմն քրեական գործին, որը վերաբերում է 44-օրյա պատերազմից հետո ձեռք բերված 2-րդ ԴՆԹ սեկվենատորին, որի շնորհիվ կրկնակի արագությամբ նույնականացվել են մեր զոհերի մարմինները կամ մասունքները, ես մոտ օրերս շատ հանգամանալից կանդրադառնամ դրան»: Ինչո՞ւ են լռում իրավապահ մարմինները, երբ ՔՊ-ական պատգամավորը «ցեխ է շպրտում» նրանց կատարած գործունեության վրա: Միգուցե ՔՊ-ական Արսեն Թորոսյանի այս համարձակ ու հրապարակային ելույթները ավելի խորը արմատնե՞ր ունեն: Մասնավորապես, իրավապահ համակարգը անզոր գտնվեց ու մինչ օրս ՀՀ առողջապահության նախկին նախարար, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանին պատասխանատվության չի կարողանում կանչել Covid-19-ի շրջանում փողերի լվացման գործով, ու այն մինչ օրս դոփում է տեղում, ինչն էլ Թորոսյանին հիմք է տալիս գնահատական տալ ուժայինների գործունեությանը: Ինչեւէ, «Ժողովուրդ» օրաթերթը, ՔՊ-ական պատգամավորի կողմից Գլխավոր դատախազության հարուցած գործը անհիմն համարելու հայտարարության հետ կապված, Գլխավոր դատախազությունից մեկնաբանություն խնդրեց, ինչին ի պատասխան՝ հայտնեցին, որ դատախազությունը չի մեկնաբանում:

ԶՐՈՒՅՑ

«ՊԵՏՔ Է ՍԿՍՎԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ»

«Հայ ազգային ճակատ» կազմակերպությունը փետրվարի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայրավանքի մուտքի մոտ մեկնարկելու է «Ի սատարում եկեղեցուն» հավաք: ArmLur.am-ը զրուցել է հավաքի կազմակերպիչ, ռազմական, հասարակական գործիչ Գեւորգ Գեւորգյանի հետ, որը ներկայացրել է հավաքի ընթացքում սպասվելիք իրադարձությունները, խոսել Եկեղեցու դերի կարեւորության եւ Եկեղեցու դեմ ուղղված սադրանքների մասին:

-Պարոն Գեւորգյան, մենք տեղեկացանք, որ վաղվա հանրահավաքին, ի աջակցություն հայ եկեղեցու, Դուք եւս հավաքվելու եք եւ Ձեր աջակցությունն եք հայտնելու: Կխնդրեմ ասել՝ ինչից սկսվեց այս ամենը, ինչու հասանք այն կետին, որ իշխանությունը սկսեց դեմ խոսել Եկեղեցուն:

-Գիտեք, ընդհանրապես Եկեղեցին պետք է դիտարկել ոչ միայն վերացական հավատի ինչ-որ մի կենտրոն, այլ ինքը պիտի լինի մեզ համար անվտանգային կուռ համակարգ. ինքը իրականում անվտանգային համակարգ է՝ եւ հոգեւոր, եւ ֆիզիկական: Նորից ուզում եմ հիշեցնել, որ այսօրվա իշխանության ղեկին նստածները գոռում էին, որ բանակը իրենց սրբության ամրոցն է, անվտանգային ամրոցն է, եւ ոչ թե բանակի դեմ են իրենց քայլերը ուղղված, այլ կոռումպացված գեներալների, եւ, բնականաբար, առաջին թիրախում էր գեներալ Մանվել Գրիգորյանը, որն իմ զինակից ընկերն էր: Նա այն մարդն էր, որը սարսափ էր ադրբեջանցիների համար եւ բոլոր նրանց, ովքեր փորձում էին ոտնձգություն կատարել մեր երկրի նկատմամբ: Փաստացի մենք տեսանք՝ դրանից հետո ամբողջ բանակի կառուցվածքը ոնց են քանդում, եւ մենք ապրեցինք 44-օրյա ցեղասպան պատերազմը, մենք ապրեցինք այն ցավը, որը մինչ օրս ապրում է մեր ազգը, կորուստները՝ եւ տարածքային, եւ երիտասարդ սերնդի: Այս ամենից հետո մենք տեսնում ենք, որ սուվերեն տարածքում է գտնվում թշնամին հոխորտացող եւ դուրս չի գալիս: Մենք տեսանք, որ բանակի անվան տակ թիրախավորվում էին անձերը, եւ հետո ամբողջ կառույցը քանդեցին: Առաջին հարվածը իրենք հասցրել էին Եկեղեցուն, երբ որ պղծում էին մեր վեհարանը: Ես կոչ եմ անում մեր բոլոր հայրենակիցներին, որ եթե մենք քրիստոնյա ենք, պետք է հասկանանք, որ մեր Տիրոջ խոսքով պիտի առաջնորդվենք: Ոչ թե մենք պետք է քննենք մեր հոգեւոր դասի, մեր Վեհափառ տիրոջ, հոգեւորականների վարքը, այլ պարզապես սկսենք մեզանից:

-Իսկ վաղը ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու Էջմիածնում:

-Մենք Մայր Աթոռի բակում, որտեղ երկու մարմարե բարձր խաչքարերն են, հավաքվելու ենք, անենք ընդհանուր աղոթք, կլինի հայտարարություն, եւ բոլորը կիմանան՝ ինչ նախաձեռնության մասին է խոսքը: Նախաձեռնության մասին կխոսեմ վաղը: Դա մեր կողմից խոնարհումն է, եւ դա կոչ է լինելու մեր ընկերներին, մեր հայրենակիցներին, որ նույնկերպ շարունակենք մեր նվիրումը մեր Եկեղեցուն, լինենք նրա կողքին, որովհետու մեր սուրբ Էջմիածինը այն հողն է, որտեղ միածին որդին իջավ, իր ոսկե մուրճով հարվածեց եւ հայոց հողն օրհնեց: Սա երբ գիտակցում ես, հասկանում ես, թե որքան պիտի լինի քո նվիրումը: Յուրաքանչյուր հայ մարդ, հայ քաղաքացի, անկախ իր քաղաքական կողմնորոշումից, պիտի համախմբվի հայ հավատի շուրջ եւ ի պաշտպան կանգնի մեր ազգային արժեհամակարգին: Հետո կլինի մոմավառություն, եւ սիրով հաջորդ օրը կսպասենք մեր հայրենակիցներին եւ այդպես շարունակ: Ես կարծում եմ, որ պետք է սկսվի ապաշխարության ճանապարհը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

«ՄԵՆՔ ՉԿԱՐՈՂԱՑԱՆՔ ՕԳՏՎԵԼ»

«Ամբողջական ինքնիշխանության հասնելու կարգախոսների ներքո մենք ամբողջովին կորցնում ենք այն. այսօր Հայաստանի արտաքին քաղաքականությունը թելադրվում է Ադրբեջանի կողմից»,- «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությանը տված հարցազրույցում ասել է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության կոմիտեի ղեկավար, ՀՀ ԱԳՆ նախկին ղեկավար Վարդան Օսկանյանը:

Նրա խոսքով՝ ամբողջական ինքնիշխանության հայեցակարգն աշխարհում ոչ մի տեղ գոյություն չունի, նույնիսկ ԱՄՆ-ն չի տիրապետում դրան: Արեւմուտքում կոչ են անում կտրուկ քայլեր չձեռնարկել իր նկատմամբ, քանի որ դա ռիսկեր է պարունակում Հայաստանի համար:

Օսկանյանը կոչ արեց ցույց տալ որեւէ երկրի որեւէ պաշտոնյայի հայտարարություն, բացի Ադրբեջանից եւ Թուրքիայից, որոնք 1996թ. Լիսաբոնի գագաթնաժողովից հետո հայտարարել են, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության հիման վրա:

Օսկանյանը Մադրիդյան սկզբունքներն անվանել է դիվանագիտական գլուխգործոց՝ հատկապես ներկա համատեքստում: «Մենք պարզապես չկարողացանք օգտվել դրանցից: Սրա համար Փաշինյանն ուներ լավագույն հնարավորությունները»,- նշել է Օսկանյանը:

Նախկին նախարարը վստահեցրել է, որ Լեռնային Ղարաբաղը որքան եղել է բանակցային գործընթացում, այդքան էլ շարունակում է մնալ:

«Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը կարգավիճակի քննարկման փուլում չի եղել, այլ եղել է միայն հակամարտության հետեւանքների վերացման փաստաթղթում»,- ընդգծել է նա:

Օսկանյանը տարակուսանք հայտնեց, որ այսօր օրակարգում է Հայաստանի տարածքով Ադրբեջանին ճանապարհ կամ միջանցք տրամադրելու հարցը այն պայմաններում, երբ ոչինչ չի ասվում Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքների եւ Լաչինի միջանցքի մասին: «Եթե Լաչինի միջանցքը բաց լիներ Լեռնային Ղարաբաղում գտնվող հայերի հետ մեր շփման համար, ապա այդ դեպքում հնարավոր կլիներ քննարկել Նախիջեւանի ադրբեջանցիների եւ Ադրբեջանի հիմնական մասի կապը: Հարցը պետք է լուծվի հայելային ճանապարհով»,- պարզաբանեց նա:

Հայաստանի արտգործնախարարության նախկին ղեկավարը կոչ արեց գոնե նվազագույն դիմադրություն ցույց տալ եւ չհամաձայնել կատարել Բաքվի յուրաքանչյուր պահանջը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԴԵՌ ՀԱՎԱՏՈՒՄ Է

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը համարում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղությունը մոտ է, եւ երկու երկրների ղեկավարներին Մյունխենի անվտանգության համաժողովի ժամանակ նա կոչ է արել հարթել դեռեւս առկա մի քանի խնդիրները: Այս մասին հայտել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը:

«Նա դեռ հավատում է, որ խաղաղությունը մոտ է, եւ նա դա քննարկել է անմիջապես այդ երկու երկրների ղեկավարների հետ եւ խրախուսել է նրանց համագործակցել՝ կամրջելու մնացած ընդամենը մի քանի հարցերը: Եվ մենք կշարունակենք խրախուսել այդ երկրներին հասնել խաղաղության համաձայնագրի», - ասել է Միլլերը լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում:

Նա նաեւ անդրադարձել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպմանը Մյունխենի համաժողովի շրջանակներում:

«Ես գիտեմ, որ երկու առաջնորդները հանդիպում են ունեցել Մյունխենում, եւ մենք կշարունակենք առաջարկել Միացյալ Նահանգների օգնությունն ու աջակցությունը համաձայնության հասնելու համար», - նշել է Պետքարտուղարության խոսնակը:

Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում Հայաստանի վարչապետի եւ Ադրբեջանի նախագահի հանդիպումը տեղի է ունեցել Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի միջնորդությամբ: Հանդիպումից հետո Փաշինյանն արձանագրել էր, որ կողմերը հավատարիմ են մնում Պրահայում եւ Բրյուսելում ձեռք բերված պայմանավորվածություններին: Առաջիկայում նախատեսվում է երկու երկրների արտաքին գործերի նախարարների, այնուհետեւ սահմանազատման հարցերով հանձնաժողովների հանդիպում:

ԸՆԴԴԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Փետրվարի 24-ին Էջմիածնում նախատեսվում է իրականացնել հանրահավաք՝ ընդդեմ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի: Հանրահավաքն իրականացնում է «Վարդանանք» շարժումը:

ArmLur.am-ը կապ հաստատեց Իտալիայի հայոց հոգեւոր հովիվ Հայր Ներսես Հարությունյան հետ՝ հասկանալու համար՝ ինչպես է վերաբերվում այս իրավիճակին.

«Դա երբեք չի կարող ճիշտ լինել, որովհետեւ եկեղեցին այնպիսի կառույց է, որ ունի իր յուրահատուկ կանոնները, իր դրվածքները, եւ նման աշխարհական միջամտությունը բոլորովին անտեղի է եւ, վնասից, խառնակչությունից բացի, ուրիշ ոչնչի չի բերի: Շատ անլուրջ եմ վերաբերվում այս հանրահավաքներին»:

Նրա կարծիքով՝ սա այնպիսի մի խումբ է, որը շատ կասկածելի կարող է լինել, որովհետեւ կարող է տարբեր կողմերով ուղղորդված լինեն, եւ իրենք ժողովուրդ ներկայացնող չեն:

«Սա կարծես թե պրովոկացիա է, գուցե եւ շեղող նպատակներ ունի, բայց որ անօգուտ ու անիմաստ գործ է, ուրիշ այլ քննադատանք չեմ կարող ասել: Ուղղակի վիարավորական է, որ մի խումբ մարդիկ նման կառույցի դեմ են դուրս գալիս»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՄ–ՀԱՅԱՍՏԱՆ

Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը մասնակցել է ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի ամփոփիչ զեկույցի եւ կայքի ներկայացմանը նվիրված միջոցառմանը, որին մասնակցում էին նաեւ Հայաստանում ԵՄ առաքելության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը, ԵՄ անդամ պետությունների մի շարք դեսպաններ:

Փոխվարչապետը հանդես է եկել ողջույնի խոսքով, որում մասնավորապես վերահաստատել է ՀՀ կառավարության պատրաստակամությունը քաղհասարակության պլատֆորմի հետ երկխոսությունը շարունակական եւ ինստիտուցիոնալ դարձնելու հարցում եւ կարեւորել է քաղհասարակության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում:

Միեր Գրիգորյանը ներկայացրել է վերջերս Բրյուսելում կայացած ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի 5-րդ նիստի արդյունքները՝ նշելով, որ ԵՄ-ն ողջունել է համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) իրականացմանն ուղղված Հայաստանի հանձնառությունը եւ բարձր է գնահատել ձեռք բերված առաջընթացը:

Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը բարձր է գնահատել ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի դերը Հայաստան-ԵՄ գործընկերության շարունակական խթանման հարցում եւ կարեւորել պլատֆորմի կողմից ներկայացվող զեկույցը՝ ընդգծելով, որ վերհանված խնդիրները հաշվի կառնվեն քաղհասարակության հետ համատեղ աշխատանքներում մշտադիտարկման եւ հաղորդակցության մեխանիզմները կատարելագործելու գործընթացում:

«Հավատացած ենք, որ ՀԸԳՀ-ը պետք է մեր քաղաքացիների կողմից որպես իրենց սեփականություն դիտարկվի եւ այդ նպատակին հասնելու համար մենք պետք է համատեղ ջանքեր գործադրենք՝ շարունակելով կառուցողական երկխոսությունը եւ ավելացնելով հաշվետվողականության աստիճանը»,- նշել է փոխվարչապետ Միեր Գրիգորյանը:

Ամփոփելով խոսքը՝ փոխվարչապետը արդյունավետ քննարկումներ է մաղթել մասնակիցներին եւ պատասխանել ներկաներին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերում էին ինչպես ՀԸԳՀ կիրարկմանը, այնպես էլ ոլորտային առանցքային բարեփոխումներին:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

Ֆրանսիայի պաշտպանության նախարար Սեբաստիան Լեկորնյուն կայցելի Հայաստան:

RTL ռադիոկայանին տված հարցազրույցում այս մասին հայտնել է Սեբաստիան Լեկորնյուն:

«Շուտով Հայաստան կգնամ խորհրդարանականներից եւ արդյունաբերական ոլորտի ներկայացուցիչներից բաղկացած մեծ պատվիրակությամբ»,- ասել է Լեկորնյուն: Նա նշել է, որ սա կլինի առաջին դեպքը, որ Ֆրանսիայի պաշտպանության նախարարն այցելում է Հայաստան: Նախարարը նաեւ ասել է, որ Ֆրանսիան բարեկամ Հայաստանին ռազմական տեխնիկա է տրամադրում բացառապես պաշտպանական նպատակների համար: «Հայաստանը մեզ համար բարեկամ երկիր է, որը բախվում է անվտանգային լուրջ խնդրի: Մեր պարտավորությունն է օգնել Հայաստանին, որպեսզի պաշտպանի իր տարածքային ամբողջականությունը»,- ասել է Լեկորնյուն:

ՀՀ-ՖՐԱՆՍԻԱ

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԺԱՄԱՆԵՆ

Ֆրանսիայի պաշտպանության նախարար Սեբաստիան Լեկորնյուն Հայաստան է ժամանելու պաշտպանության ոլորտի մի շարք առաջատար ընկերությունների ներկայացուցիչների հետ:

Այս մասին հայտնել է POLITICO-ն:

Նշվում է, որ Հայաստան է ժամանելու MBDA, Nexter, Safran, Thales, Arquus եւ Lecornu ընկերության ներկայացուցիչները:

MBDA-ը հրթիռներ մշակող եւ արտադրող ընկերություն է: Հրթիռներ եւ հրթիռային համակարգեր է մատակարարում զինված ուժերի յուրաքանչյուր տեսակի համար (օդային, ծովային, ցամաքային): Արտադրում է 48 տիպի հրթիռ, եւս 15-ը մշակման փուլում է (AIM-132, Meteor, MICA, Aspide, Apache, Exocet եւ այլն):

Ֆրանսիական Nexter Systems ընկերությունը մասնագիտացած է զրահատեխնիկայի, հրետանային համակարգերի, զինամթերքի եւ հարակից սարքավորումների նախագծման, մշակման եւ արտադրության մեջ: Nexter Systems արտադրում է տանկեր, զրահատեխնիկա, հրետանային համակարգեր, հեռահար մարտական կայաններ, զենիթային համալիրներ եւ հակատանկային կառավարվող հրթիռներ:

Safran ընկերությունը հիմնականում գործում է օդատիեզերական, պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում: Safran-ը արտադրում է ավիացիոն շարժիչներ, ավիացիոն սարքավորումներ, օպտիկական-էլեկտրոնային համակարգեր, նավիգացիոն համակարգեր, հսկողության համակարգեր:

Thales ընկերությունը գործում է հիմնականում օդատիեզերական, պաշտպանության, անվտանգության եւ տրանսպորտի ոլորտներում: Thales-ը արտադրում է ավիատիեզերական համակարգեր, ռադարներ, էլեկտրոնային մարտական համակարգեր, հակահրթիռային պաշտպանության համակարգեր: Ընկերությունը նաեւ առաջարկում է լուծումներ կիբեռանտվնագության ոլորտում:

Arquus ընկերությունը մասնագիտացած է անվավոր եւ թրթուրավոր ռազմական տեխնիկայի նախագծման, մշակման եւ արտադրության, ինչպես նաեւ հարակից ծառայությունների մեջ: Arquus-ը նախագծում եւ արտադրում է մի շարք զրահապատ տրանսպորտային միջոցներ՝ ներառյալ հետեւակային մարտական մեքենաներ, զրահափոխադրիչներ, հետախուզական մեքենաներ եւ ընդհանուր նշանակության զրահապատ տրանսպորտային միջոցներ:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Ֆրանսիան փետրվարի 22-ին Հայաստան կառաքի պաշտպանական սպառազինության խմբաքանակ: Սպառազինությունը ներառում է Thales ընկերության Ground Master (GM 200) երեք ռադար, որոնք հնարավորություն կտան 250 կիլոմետր հեռավորության վրա հայտնաբերել հակառակորդի ինքնաթիռները, ինչպես նաեւ գիշերային տեսողության սարքեր, հեռադիտակներ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՅՈՒԴԱՐՁ

ՀՐԱՎԻՐԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ

Փարիզում տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Ֆրանսիայի վարչապետ Գաբրիել Ատալի հետ:

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ վարչապետի աշխատակազմի տարածած հաղորդագրությունից, Ֆրանսիայի վարչապետը ողջունել է Նիկոլ Փաշինյանի այցը եւ ընդգծել իր գլխավորած կառավարության պատրաստակամությունը՝ հետեւողականորեն զարգացնելու համագործակցությունը Հայաստանի հետ:

Նիկոլ Փաշինյանը եւս մեկ անգամ շնորհավորել է Գաբրիել Ատալին վարչապետի պաշտոնը ստանձնելու առիթով եւ մաղթել հաջողություններ: Վարչապետը կարեւորել է Ֆրանսիայի կառավարության հետ տարբեր ոլորտներում փոխգործակցության խորացումն ու ընդլայնումը:

Մասնավորապես, զրուցակիցները քննարկել են առեւտրատնտեսական կապերի, շինարարության, ենթակառուցվածքների զարգացման, էներգետիկայի, ջրային ոլորտի կառավարման, զբոսաշրջության բնագավառներում գործակցությանը եւ համատեղ ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Վարչապետ Փաշինյանը կարեւորել է Ֆրանսիայի կառավարության աջակցությունը Հայաստանին՝ շուկաների դիվերսիֆիկացման, ինչպես նաեւ ստանդարտների ներդրման ուղղությամբ:

Նիկոլ Փաշինյանը Գաբրիել Ատալին պաշտոնական այցով հրավիրել է Հայաստան: Ֆրանսիայի վարչապետը հրավերը սիրով ընդունել է:

ՆՅՈՒԱՆՍՆԵՐԸ ԿԱՐԵՎՈՐ ԵՆ

Հայաստանի փոխվարչապետ Միեր Գրիգորյանը մանրամասնել է, թե ինչ քարտեզներով է պետք առաջնորդվել Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանների դելիմիտացիայի գործընթացում:

«Ես վստահ եմ՝ ինքներդ էլ գիտեք, թե դելիմիտացիայի գործընթացը ինչ բարդ գործընթաց է: Նախ, քարտեզ ասելով՝ մենք պետք է հասկանանք, որ խոսքը պետք է գնա բացառապես տոպոգրաֆիկ քարտեզների մասին, որոնք պրոֆեսիոնալ քարտեզներ են, որովհետեւ շատ մարդիկ սխեմատիկ, մեթոդական քարտեզները շփոթում են տոպոգրաֆիկ քարտեզների հետ, որոնք այլ որակ եւ այլ տրամաբանություն ունեն: Իրականության մեջ դելիմիտացիայի գործընթացը միայն քարտեզների հետ աշխատանքը չէ: Դելիմիտացիայի գործընթացը նախ իրավական հենքի բացահայտումն է, որի վրա կազմվել է այս կամ այն քարտեզը: Ընդ որում՝ ամեն մարմին չէ, որ իրավունք ունի կամ խորհրդային միության ժամանակ իրավունք է ունեցել քարտեզ կազմել կամ քարտեզ տպագրել: Այս բոլոր նյուանսները, որոնց մասին ես խոսում եմ, շատ կարեւոր են եւ պետք է հասցեագրվեն մեր աշխատանքի ժամանակ»,- ասաց Գրիգորյանը:

Նա նշեց, որ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման հանձնաժողովների հաջորդ հանդիպման ժամկետների վերաբերյալ պայմանավորվածություն դեռ չկա:

Մյունխենում Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի միջնորդությամբ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպումից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ այդ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում կազմակերպել երկու երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպում, ինչպես նաեւ հանդիպում փոխվարչապետերի մակարդակով, որոնք գլխավորում են նաեւ երկու երկրների սահմանազատման հանձնաժողովները:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵԹԵ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ «ՏԵՂՈՒՄ ԼԻՆԵԻՆ»

Փետրվարի 21-ին սպանություն է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Այն տեղի չէր ունենա, եթե ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Վարդենիսի բաժնի քրեական հետախուզության եւ համայնքային ոստիկանության բաժանմունքի ծառայողները՝ բաժնի պետ Արմենակ Մուրադյանի գլխավորությամբ, տիրապետեին օպերատիվ իրավիճակին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ժամը 19:15-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Վարդենիսի բժշկական կենտրոն են տեղափոխվել 2 հոգի, ովքեր գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում:

Քրեական ոստիկանությունից տեղեկությունը փոխանցում են ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն եւ ոստիկանության Վարդենիսի բաժին, որտեղից Վարդենիսի բժշկական կենտրոն է մեկնում ոստիկանության Վարդենիսի բաժնի օպերատիվ խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահի գլխավորությամբ:

Հիվանդանոցում բժիշկները նրանց հայտնում են, որ վիրավորները ի վիճակի չեն կատարվածի մասին բացատրություն տալ, քանի որ գտնվում են վիրահատարանում:

Ոստիկանները պարզել են, որ վիրավորներն են Փոքր Մասրիկ գյուղի բնակիչներ 41-ամյա Վասիլ Լալայանն ու 37-ամյա Արա Լալայանը:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վերջիններս հարազատ եղբայրներ են:

Կարճ ժամանակ անց Ա. Լալայանը հիվանդանոցում, գիտակցության չգալով, մահանում է, իսկ Վ. Լալայանին Վարդենիսի բժշկական կենտրոնում առաջին բուժօգնությունն են ցուցաբերում, ապա տեղափոխում Երեւանի ՀՀ պաշտպանության նախարարության «Մուրացան» հոսպիտալ:

Մինչ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությունը՝ վարչության պետ Արթուր Ջոհրաբյանի գլխավորությամբ, եւ ոստիկանության Վարդենիսի բաժնի ծառայողները՝ բաժնի պետ Ա. Մուրադյանի գլխավորությամբ, փորձում էին պարզել՝ որտեղ եւ ինչ հանգամանքներում է տեղի ունեցել սպանությունը, օպերատիվորեն Գեղարքունիքի մարզ ժամանած ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողները պարզում են որոշ հանգամանքներ:

Ըստ Քրեական ոստիկանության ստացած տեղեկությունների՝ նույն օրը՝ ժամը 18:30-ի սահմաններում, Արփունք-Փոքր Մասրիկ գյուղամիջյան ճանապարհին՝ Փոքր Մասրիկ գյուղի գերեզմանատան հարեւանությամբ, տեղի է ունեցել վիճաբանություն եւ ծեծկռտուք, որին մասնակցել են Արփունք գյուղի բնակիչներ 45-ամյա Անդրանիկ Հովսեփյանը, նրա որդիները՝ նույն գյուղի բնակիչներ 19-ամյա Սերգեյ Հովսեփյանը, 16-ամյա Ա. Հովսեփյանը, վիրավորներ Ա. եւ Վ. Լալայանները եւ նրանց եղբայրը՝ 34-ամյա Նորայր Լալայանը:

Նրանց միջեւ է տեղի ունեցել վիճաբանությունը, որի ընթացքում էլ, ըստ նախնական տեղեկությունների, Ս. Հովսեփյանը իր մոտ եղած դանակով հարվածներ է հասցրել Ա. եւ Վ. Լալայանների մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Հաշվի առնելով հանցագործության վտանգավորության աստիճանը՝ ժամանել է նաեւ Գեղարքունիքի մարզի դատախազ Այվազյանը:

Ժամանել են նաեւ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության խումբը՝ վարչության պետ Մարգարյանի գլխավորությամբ:

Դեպքի փաստով Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ մինչ քննչական խումբը դեպքի վայրի զննություն էր կատարում, քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողները հայտնաբերում են Ս. Հովսեփյանին եւ բերման ենթարկում ոստիկանության Վարդենիսի բաժին:

Վերջինս խոստովանել է կատարված հանցանքը:

Ոստիկանները հայտնաբերել են նաեւ մասնակիցներից Ա. Հովսեփյանին, որն արդեն Վարդենիսի քննչական բաժին է ներկայացրել ենթադրյալ հանցագործության գործիք հանդիսացող դանակը:

Դեպքի փաստով Վարդենիսի քննչական բաժնում, ՀՀ քր.օրի 155-րդ հոդվածի 1-ին մասի եւ 44-155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ս. Հովսեփյանը քննիչի որոշմամբ ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Վարդենիսի բաժնի ձերբակալվածների պահման վայր:

Ֆոտոլրագրողի հետ զրույցում գյուղացիները, որոնք հրաժարվեցին ներկայանալ, ասում էին, որ մասնակիցների մեջ կա ՊՆ ծառայող, եւ այս սպանությունը տեղի չէր ունենա, եթե ոստիկանության Վարդենիսի բաժնի ծառայողները՝ բաժնի պետի գլխավորությամբ, տեղում լինեին, մինչդեռ շատերը գիտեին, որ էս մարդկանց ջուրը մի առվով չի գնում, ու այդ մասին իմացել է նաեւ Վարդենիսի ոստիկանությունը, ու եթե ոստիկանները լավ աշխատեին, կարող էին կանխել այս միջադեպը, մինչդեռ սպանությունը տեղի ունեցավ, նոր Վարդենիսի ոստիկանությունը թմբիրից արթնացավ:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ՝ «ՀԻՆ ՋՐՎԵԺ» ՌԵՍՏՈՐԱՆԻՑ

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ փետրվարի 19-ին առանձնապես խոշոր չափի գումարի գողության դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 10:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի բաժին ահազանգ է ստացվել, որ Ջրվեժ 17 փողոցում գործող «Հին Ջրվեժ» ռեստորանային համալիրում գողություն է տեղի ունեցել:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր է մեկնել ոստիկանության Կոտայքի բաժնի օպերատիվ խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահի գլխավորությամբ:

Ժամանել են նաեւ Հայաստանի քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Տեղում ռեստորանային համալիրի տնօրեն ներկայացած 56-ամյա Մարգարիտ Բ.-ն ոստիկաններին եւ քննիչներին հայտնել է, որ նույն օրը՝ ժամը 01:30-ից մինչեւ 09:30-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը կամ անձինք բացել են ռեստորանային համալիրի հանդիսությունների սրահի ալյումինե պատուհանը, մտել ներս եւ դրամարկղի սրահից գողացել չիրկիզվող պահարանը:

Դեպքի փաստով Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, ռեստորանում էլ հայտնել են, որ գողացված «սեյֆում» եղել է մի քանի մլն դրամ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱՆԱ

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՄԲ

Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանի թիկնազորի ձերբակալված անդամի՝ Աշոտ Դանիելյանի բնակարանում երեկ իրավապահները խուզարկություն են իրականացրել:

Խուզարկությունը, ըստ Դանիելյանի պաշտպան Ռոման Երիցյանի, իրականացվել է դատավարական կանոնների կոպիտ խախտմամբ. «Ներկայացել են երեք տղամարդ, որոնցից մեկը գործով քննիչն է: Դանիելյանի կնոջը պարզաբանել են, որ պետք է իրականացնեն բնակարանի խուզարկություն: Նրանք բնակարանից դուրս են հրավիրել ընտանիքի բոլոր անդամներին եւ նրանց արգելել են ներկա գտնվելու խուզարկությանը: Դուրս են հրավիրել նաեւ բնակելի տան օրինական տիրապետողին՝ Աշոտ Դանիելյանի կնոջ հորը, եւ առանց բնակելի տան օրինական տիրապետողի, իրականացվել է խուզարկությունը»,- հայտնեց փաստաբան Երիցյանը:

Նրա խոսքով՝ խուզարկության եկածները, ի պատասխան Դանիելյանի աներոջ պնդումների, թե ցանկանում է, որ խուզարկությանը ներկա գտնվի փաստաբան, հայտարարել են, որ թույլ չեն տալու փաստաբանի ներկայություն. «Այն պահին, որ ժամանել եմ, խուզարկությունն արդեն ավարտված էր: Հարցրել եմ՝ ինչու են արգելել բնակելի տան օրինական տիրապետողին ներկա գտնվել խուզարկությանը: Այս հարցին պատասխանել են, թե նա չի հանդիսանում բնակարանի օրինական տիրապետող այն դեպքում, երբ վերջինիս հետ կնքված է վարձակալության օրինական պայմանագիր եւ հանդիսանում է բնակարանի օրինական տիրապետող»: Խուզարկության ընթացքում քննությանը հետաքրքրող որեւէ բան չի հայտնաբերվել. «Ոչ թմրանյութ, ոչ թմրանյութի հետ առնչություն ունեցող իր, օրինակ՝ գլանակ, կշեռք կամ այլ բան: Թերեւս հայտնաբերված եւ քննիչի համար կասկածելի միակ բանն այս կանաչավուն զանգվածն էր, որը նույնիսկ առանց փորձաքննության, հոտառությամբ եւ անզեն աչքով պարզ է, որ չորացրած կանաչի է՝ նանա: Ուրիշ ոչ մի բան չի հայտնաբերվել ու չի առգրավվել»:

Փաստաբանը հիշեցրեց, որ Դանիելյանի անձնական խուզարկությամբ նույնպես քննությանը հետաքրքրող ոչինչ չի հայտնաբերվել, այդ թվում՝ մեքենայից. «Քննիչի կողմից մեզ համար անհայտ վայրից հայտնաբերված ինչ-որ դեղնականաչավուն զանգվածն էլ, ըստ փորձաքննության տվյալների՝ քաշը կազմում է 0,44 գրամ, որը բավարար չէ ոչ միայն անձին քրեական, այլեւ վարչական պատասխանատվության ենթարկելու համար»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 21-ից 22-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 54 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

Փետրվարի 29-ին Իջեւան համայնքի Վազաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում նշանակված են «Էյթի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերեւակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ: Սա արդեն երկրորդ քննարկումն է Վազաշենում: Հայցվող տարածքը գտնվում է Վազաշեն գյուղից 1,5-1,6 կմ հարավ արեւելք, երեւակման տարածքում առանձնացվում է Կարմիր քարի տեղամասը: «Էյթի Գրուպ» ՍՊԸ-ն հախատեսում է հետախուզումն իրականացնել երկրաբանական երթուղիների, մեխանիկական սյունակային հորատանցքերի, հետախուզաառուների անցմամբ եւ նմուշարկման միջոցով: Ընկերությունը հավաստիացնում է, որ նախատեսված գործունեության ժամանակ բուսական եւ կենդանական աշխարհը չի տուժելու, տեղամասում հատուկ պահպանվող տարածքներ, սողանքներ չկան: 2019թ.-ին ընկերության ներկայացված հայտին բնապահպանության նախարարությունը բացասական եզրակացություն էր տվել: 2021թ. ընկերությունը նորից հայտ էր ներկայացրել, որով նախատեսվում էր հետախուզական աշխատանքներն իրականացնել 2020-2023թթ.-ին: 2023-ի սեպտեմբերին Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին է դիմել «Էյթի Գրուպ» ՍՊԸ-ն, որին պատկանում է Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերեւակման տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման ընդերքօգտագործման իրավունքը: Գործող օրենսդրության համաձայն՝ Վազաշեն բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկած հողամասից 6,924հա մակերեսով տարածքը հատկացվել է ընկերությանը՝ կնքելով հողի սերվիտուտի պայմանագիր մեկ տարի ժամկետով, հետագայում այն երկարաձգելու հնարավորությամբ, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար: 2023թ. սեպտեմբերի 22-ին Իջեւան համայնքի ավագանին որոշել է հավանություն տալ Վազաշեն բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված 11-059-0146-0001 ծածկագրով հողամասից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար 6,924հա մակերեսով տարածք «Էյթի Գրուպ» ՍՊԸ-ին հատկացնելու՝ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ երկարաձգելով հողի սերվիտուտի պայմանագիրը մինչեւ 2024թ.-ի մարտի 24-ը, հետագայում այն երկարաձգելու հնարավորությամբ: «Էյթի գրուպ» ՍՊԸ-ն գրանցվել է 2019թ. նոյեմբերին, այն հիմնադրել են Տավուշի մարզի Գետահովիտ համայնքում հաշվառված Արմեն Բորիսի Չապուխյանն ու Արաբկիր համայնքում գրանցված Տիգրան Արամի Ավետիսյանը: 2012-2017թթ.-ին Վազաշենի ոսկու հանքավայրի տարածքում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու թույլտվություն ունեցել է «Պոլիմետ կորպորացիա» հայ-կանադական ՀՁ-ն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

«ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

Հնդկաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հովանու ներքո գործող «Observer Research Foundation»-ի (ORF) հրավերով՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը Նյու Դելիում մասնակցում է «Ռաիսինա երկխոսություն» (Raisina Dialogue) միջազգային համաժողովին, որին ներկա են տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ՝ վարչապետեր, նախարարներ, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ եւ այլք:

Այս մասին հայտնում են ՀՀ ԱՍՀ նախարարությունից՝ ընդգծելով, որ միջոցառումը մեկ հարկի տակ է միավորում գլոբալ եւ տարածաշրջանային պետական եւ ոչ պետական դերակատարներին՝ հնարավորություն տալով ծավալել բազմակողմանի երկխոսություն եւ համագործակցություն:

Համաժողովը մեկնարկել է «Հայ-հնդկական երկխոսություն» միջոցառմամբ, որի շրջանակում բացման ելույթով հանդես է եկել նաեւ նախարար Նարեկ Մկրտչյանը: Ընդգծելով Հնդկաստանի հետ գործընկերային արդյունավետ հարաբերությունների կարեւորությունը՝ նախարարը խոսել է երկու երկրների միջեւ գործընկերության խթանման ուղղությամբ երկուստեք իրականացվող քայլերի մասին: Շեշտվել է, որ վերջին շրջանում Հնդկաստանի հետ հարաբերություններն ակտիվ զարգանում են, ինչը Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է:

«Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ համագործակցությունը նոր թափ է ստացել մի շարք ոլորտներում, այդ թվում՝ առեւտրի եւ տնտեսության, բարձր տեխնոլոգիաների, կրթության ու մշակույթի: Երկու ժողովուրդների միջեւ հնուց ի վեր առկա փոխադարձ հարգանքը եւ փոխվստահությունը նպաստում են միջմարդկային փոխանակումների ինտենսիվացմանը տարբեր բնագավառներում»,- նշել է նախարարը:

Անդրադառնալով աշխատանքային միգրացիայի ոլորտում իրականացվող բարեփոխումներին եւ առկա խնդիրների ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ Նարեկ Մկրտչյանը նշել է, որ իր ղեկավարվող նախարարության կողմից անհրաժեշտ մոտեցումներ են մշակվում՝ ապահովելու ոլորտի համապատասխան կանոնակարգումը: Նախարարը նաեւ խոսել է նախարարության կողմից 2022 թվականին ստորագրված Skill India-ի հետ փոխըմբռնման հուշագրից, որը վերապատրաստման եւ հմտությունների զարգացման հնարավորություն է նախատեսում:

Նախարարն իր խոսքում կարեւորել է նաեւ արհեստական ինտելեկտի ոլորտում համագործակցության ներուժը եւ առաջարկել դիտարկել գլոբալ AI նորարարական հարթակի ստեղծման գաղափարը՝ լուծումների եւ հետազոտությունների փոխանակումը հեշտացնելու, միջազգային համագործակցության միջոցով սոցիալական օգուտները խթանելու նպատակով: Ազգերի միջեւ խաղաղության, համագործակցության ու փոխադարձ հարգանքի դրսեւորման կարեւորության համատեքստում խոսվել է նաեւ «Խաղաղության խաչմերուկի» հայեցակարգի մասին եւ նշվել, որ անվտանգությունը, տնտեսական կայունությունը եւ երկրների զարգացումը պետք է դիտարկվեն որպես հավաքական գլոբալ պատասխանատվություն:

Համաժողովի ընթացքում կազմակերպվել են նաեւ պանելային քննարկումներ, որոնց շրջանակում մասնակիցները քննարկել են Հայաստան-Հնդկաստան համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«ԱՄԱՅԻ ՍԱՐԵՐԸ ՄԵԶ ՊԵՏՔ ՉԵՆ»

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ աղօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Աշնանը հավաքած բերքի իրացման հարցը մոտ 5 ամիս է, դեռ ննջարկում են կառավարությունում. հիշեցում՝ 7 օրից գարուն է:

Սահմանամերձ Վարդենիսի բնակիչների մշակած կարտոֆիլը չի իրացվել. գրություն ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարին:

Վարդենիս խոշորացված համայնքի բնակիչների կողմից ստացել էի բողոքներ առ այն, որ իրենց մշակած կարտոֆիլը չի վաճառվել. պահեստներում, հորերում տոննաներով կարտոֆիլ է մնացել:

Բնակիչները վարկ են վերցրել, մշակել կարտոֆիլը, որ կարողանան ստացված եկամուտով ոչ միայն մարել վարկերը, այլեւ շահույթ ունենալ եւ ողջ տարին ապրել դրանով, իսկ հիմա չեն կարողանում տարվա բերքն իրացնել:

Արձագանքելով իմ հայրենակիցների մտահոգություններին՝ գրություն եմ ուղարկել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարին՝ պահանջելով ձեռնարկել համապատասխան միջոցներ խնդրի լուծման ուղղությամբ:

Իմ գրությանն ի պատասխան՝ նախարար Գնել Սանոսյանը տեղեկացրել է հետեւյալը. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի բնակիչների կողմից 2023թ. արտադրված, սակայն չիրացված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցերը քննարկվում են պատասխանատու գերատեսչությունների, մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության եւ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հետ»:

Շուտով սկսվելու են գարնանային գյուղատնտեսական աշխատանքները, իսկ ՀՀ կառավարությունում քննարկում են 2023-ին հավաքած բերքի իրացման հարցերը:

Որքա՞ն եւ ինչպե՞ս պետք է սպասեն արդեն սահմանամերձ դարձած Վարդենիսի բնակիչները. պատասխանում ոչինչ չի ասվում:

Կարող եմ միայն արձանագրել, որ ներկայիս կառավարության քաղաքականությունը, որն իրականացվում է սահմանամերձ բնակավայրերի մասով, հակահայկական է, հակամարդկային եւ հակապետական:

Սահմանամերձ բնակավայրերի բնակիչների խնդիրներն ավելացնելով՝ ՀՀ կառավարությունը նրանց ցույց է տալիս հայրենի տունը լքելու ճանապարհը: Իսկ հետո արդեն սցենարը պարզ է. դատարկ, ամայի, ձյունոտ սարերն ու բնակավայրերը մեզ պետք չեն, դրանք «դժբախտ ու դժգույն են»:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 1 մարդ զոհվել է, 9-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

Team

ԲԱՑԱՌԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

team™
TELECOM ARMENIA

Team Telecom Armenia-ի հեռախոսահամար գնելու համար այլեւս պարտադիր չէ լինել Հայաստանում կամ մոտենալ մասնաճյուղ: Team-ը առաջինը Հայաստանում, թվային լուծումների շնորհիվ, բացառիկ հնարավորություն է տալիս My Team հավելվածի միջոցով գնել eSIM քարտ եւ ակտիվացնել այն աշխարհի ցանկացած կետից:

eSIM ստանալու համար պետք է ներբեռնել My Team հավելվածը, ընտրել eSIM ակտիվացնելու բաժինը, անցնել նույնականացում եւ ձեռք բերել կանխավճարային համակարգի հեռախոսահամար: Այս հնարավորությունից այժմ կարող են օգտվել միայն ՀՀ քաղաքացիները:

«Team Telecom Armenia-ն, կիրառելով նորարարական լուծումներ, շարունակում է մշակել այնպիսի ծառայություններ, որոնք թվային աշխարհը էլ ավելի մոտ են դարձնում բաժանորդներին: Մեր նոր բացառիկ ծառայությունը կօգնի Հայաստանի քաղաքացիներին մեկ հպումով ստանալ հայկական հեռախոսահամար: Այսինքն՝ անկախ նրանից՝ ճանապարհորդում եք, թե պարզապես գտնվում եք հեռավոր վայրում, որտեղից մասնաճյուղ մոտենալը դժվար է, մեր այս լուծումը երաշխավորում է, որ դուք միշտ կլինեք կապի մեջ»,- ասում է Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

eSIM թվային քարտը կարելի է ակտիվացնել բաժանորդի հեռախոսում, եթե այն ունի այդ տեխնոլոգիական հնարավորությունը:

My Team հավելվածը հասանելի է iOS եւ Android համակարգերում:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության ոլորտում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Այս հարուստ փորձի եւ ժամանակակից տեխնոլոգիաների համադրության շնորհիվ՝ Team-ը հուսալի եւ նորարար ծառայություններ է տրամադրում թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ Է ՉԽՈՍԵԼԸ

Հայերին Լեռնային Ղարաբաղ վերադարձնելու իրական հնարավորություն կա. այս մասին «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությանը տված հարցազրույցում ասել է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հիմնարար իրավունքների պաշտպանության կոմիտեի ղեկավար, ՀՀ ԱԳՆ նախկին ղեկավար Վարդան Օսկանյանը:

Նա հանցագործություն է անվանել այնտեղից վտարված հայերի՝ Լեռնային Ղարաբաղ վերադարձի մասին չխոսելը:

Նախկին արտգործնախարարը հավելել է, որ այսօր այս հարցը պետք է բարձրացվի, սա իրական խնդիր է, եւ ամբողջ աշխարհը խոսում է դրա մասին:

Օսկանյանը հիշեցրել է, որ կա Միջազգային դատարանի որոշումը, ինչպես նաեւ ԱՄՆ-ի, Եվրոպայի եւ Ռուսաստանի հայտարարությունները հայերին Լեռնային Ղարաբաղ վերադարձնելու անհրաժեշտության մասին, այնպես որ, ցանկացած հարցում է հնարավոր դաշնակից գտնել, եթե հաջողվում է խնդիրը ձեւակերպել այնպես, որ հետաքրքիր լինի այն:

«Նույնիսկ Ադրբեջանն է խոսում Լեռնային Ղարաբաղ հայերի վերադարձի մասին, թեեւ նրա ընկալումը մի փոքր այլ է: Վերադարձի իրավունք կա, եւ դիվանագիտական աշխատանքի միջոցով հնարավոր կլինի ձեռք բերել երաշխիքներ եւ պայմաններ, որ հայերն իրենց ապահով զգան վերադառնալիս: Եթե Հայաստանի իշխանություններն իրենց վրա վերցնեն այդ գործը, ապա գաղափարի իրագործման հավանականությունը 60-70 տոկոսի սահմաններում էր: Առանց այս աջակցության, այս հավանականությունը 50%-ից ցածր է»,- նկատել է նախկին նախարարը:

Նա հույս է հայտնել, որ Հայաստանի իշխանություններն իրենք էլ կգիտակցեն այս հարցի կարեւորությունը:

Օսկանյանի կարծիքով՝ հայերի վերադարձով Լեռնային Ղարաբաղ միջազգային երաշխիքների առկայության դեպքում հնարավոր կլինի կայուն խաղաղության հասնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ:

Օսկանյանը Լեռնային Ղարաբաղն անվանել է տարածաշրջանի ամենահայկական տարածքը, եւ ոչ ոք չպետք է բողոք ունենա այս փաստի դեմ: «Հայաստանը խոսում է ամեն գնով խաղաղության մասին, բայց Ադրբեջանը խոսում է ոչ թե դրա մասին, այլ այսպես կոչված ռեւանշիզմի վերացման մասին: Այս երկու ինքնաթիռները չեն կարող շփման կետ ունենալ: Ադրբեջանի կողմից այս, այսպես կոչված, ռեւանշիզմը նշանակում է մեր իրավունքների պաշտպանություն:

Այս հարցի լուծումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե այն լինի գոնե մասամբ արդարացի: Գոյություն ունի միջազգային իրավունք, որը թույլ է տալիս հակամարտությունների արդյունքում տեղահանվածներին վերադառնալ իրենց տները:

Ադրբեջանն ասում է՝ թող վերադառնան որպես Ադրբեջանի քաղաքացի: ԱՄՆ-ն բարձրացրել է նշաձողը եւ ասում է. «Մենք այնպես կանենք, որ հայերի հետ ոչինչ չպատահի, երբ նրանք վերադառնան Լեռնային Ղարաբաղ»: Մենք մեր կողմից ասում ենք, որ լրացուցիչ մեխանիզմ է պետք: Կոչ ենք անում միջազգային երաշխիքների առկայության դեպքում հայերին հավաքական վերադարձնել»,- պարզաբանել է Հայաստանի ԱԳՆ նախկին ղեկավարը:

Նրա խոսքով՝ հայերը կվերադառնան Լեռնային Ղարաբաղ, եթե լինի Լեռնային Ղարաբաղ-ԵԱՀԿ կամ Լեռնային Ղարաբաղ-ՄԱԿ մակարդակով համատեղ վարչակազմ, որը կարող է լինել անցումային եւ ժամանակավոր:

«Այս ընթացքում Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ տեղի կունենան բանակցություններ, որոնց արդյունքում նրանք կգան հայության ճակատագրի խնդրի լուծմանը:

Ես չեմ խոսում ինքնավարության կարգավիճակի կամ այլ կարգավիճակի մասին: Թող ժողովուրդն ինքը որոշի դա ապագայում: Հայաստանի իշխանությունները պարտավոր են դա մտցնել իրենց օրակարգ, քանի որ հենց իրենց սխալների պատճառով են այս մարդիկ հայտնվել ստեղծված իրավիճակում: Նրանց սխալների արդյունքում կորել է Լեռնային Ղարաբաղը: Նրանք պարտավոր են նպաստել հայերի՝ Լեռնային Ղարաբաղ վերադարձի պահանջին:

Եթե Հայաստանի իշխանություններն ավելի վաղ, ինչպես ասացի, բարձրացնեին Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակի հարցը, ինչպես դա խորհրդային տարիներին էր, ապա այսօր իրավիճակն այլ կլիներ»,- ասաց Օսկանյանը:

Նա Հայաստանի իշխանություններին կոչ արեց լսել իրեն՝ վստահություն հայտնելով, որ միջազգային հանրությունը կաջակցի այս օրակարգին եւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղությանը, հակառակ դեպքում իրավիճակն էլ ավելի կվատթարանա:

Նախկին նախարարը պատրաստակամություն է հայտնել աշխատել իշխանությունների հետ միասին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԵՐԿԱՐԱԶԳԻ

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Կառավարությունը մինչեւ 2025 թվականի հուլիսի 1-ը կերկարաձգի Բնակարանների եւ անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների (ռենովացիա) պետական աջակցության ծրագիրը:

Նախագիծն ընդգրկված է կառավարության փետրվարի 23-ի նիստում:

«2022 թվականի հունիսի 1-ից մեկնարկել է Բնակարանների եւ անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիրը, որով նախատեսվում էր շուրջ 2000 շահառուի տրամադրել ծրագրով ներգրավված վարկերի տոկոսների համար սուբսիդավորում: 2023թ. արդյունքներով շահառուների թիվն ավելի քան 7600 է, ինչն էլ իր հերթին խոսում է ծրագրից օգտվելու հարցում քաղաքացիների շահագրգռվածության մասին: Բացի այդ, ծրագրի հաջողված լինելու մասին է վկայում նաեւ տարածքային առումով համաչափ բաշխվածությունը:

Ծրագրի ավարտը նախատեսված է 2024 թվականի հուլիսի 1-ին: 2023թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ վարչապետի կողմից ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում անցկացված խորհրդակցության շրջանակներում հանձնարարվել է նախաձեռնել համապատասխան իրավական ակտի ընդունում ծրագրի երկարաձգման նպատակով: Ծրագրի երկարաձգմամբ շահառուների թիվը կավելանա եւս շուրջ 3000-ով»,- նշված է նախագծի հիմնավորման մեջ:

Ծրագրի երկարաձգմամբ անհրաժեշտություն կառաջանա ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի ծախսերում կատարել համապատասխան փոփոխություններ եւ նախատեսված միջոցներն ավելացնել շուրջ 2000 նոր շահառուի համամասնությամբ: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի ՀՀ 2024 թվականի պետական բյուջեում իրականացնել համապատասխան վերաբաշխում՝ ծրագրին հատկացնելով հավելյալ շուրջ 200 միլիոն դրամ, իսկ 2025 թվականի եւ հետագա տարիների համար հավելյալ անհրաժեշտ կլինի շուրջ 400 միլիոն դրամ:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՏԱՎԱԶԴ ՓԵԼԵՇՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԵՐԸ ՉԻ ԼՔՈՒՄ ՆՐԱՆ

Սիրված, գնահատված կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանի ֆիլմերը ցուցադրվում են աշխարհի տարբեր երկրներում, նրա տարածական մոնտաժի տեսությունն ուսումնասիրվում եւ ուսուցանվում է հեղինակավոր կինոինստիտուտներում, իսկ ժողովրդական սերը չի լքում նրան:



Փելեշյանը, որի «Սկիզբ», «Մարդկանց երկիրը», «Մենք», «Մեր դարը», «Կյանք», «Տարվա եղանակները» եւ այլ յուրահատուկ կինոնկարները հնարավորություն են տալիս բոլորովին այլ հայացքով նայել կյանքին, աշխարհին, փետրվարի 22-ին տոնում է ծննդյան 86-ամյակը:

Ռեժիսորը, որին պարբերաբար հնարավոր է տեսնել Երեւանի փողոցներում, մշակութային տարբեր միջոցառումների ընթացքում, չի սիրում հարցազրույցներ տալ, սակայն ելույթներից երբեմն չի հրաժարվում: Ամիսներ առաջ կինոռեժիսորը որոշ դրվագներ պատմեց իր կյանքից:

Ներկայացնում ենք նրա հիշողությունները:

«Շատ տարիներ առաջ ես ապրում էի «Արմենիա» հյուրանոցում: Մի երեկո զանգ պատվիրեցի, որ զրուցեմ Փարաջանովի հետ: Երկար զրուցեցինք, շատ հարցեր քննարկեցինք, անգամ բամբասեցինք ստուդիայի ղեկավարությունից: Խոսեցինք ավելի քան մեկ ժամ, եւ երբ անջատեցի հեռախոսը, անմիջապես զանգ եղավ: Փոստի աշխատակցուհին էր, ասաց, որ չի կարող վճար վերցնել, քանի որ իմ եւ Փարաջանովի զրույցի պես բան կյանքում չի լսել: Նա խնդրեց ծանոթանալ ինձ հետ եւ հաջորդ օրը եկավ հյուրանոց, որտեղ հանդիպեցինք: Մի առիթով էլ ասաց՝ եթե ցանկանամ զանգել արտերկիր, նա անվճար խոսելու հնարավորություն կտա: Ասացի, որ արտերկրի համարներ չունեմ»,-պատմել էր Փելեշյանը:

Մի առիթով էլ ռեժիսորը գնացքով մեկնում է Մոսկվա: «Ուղեկցորդն ինձ ցույց տվեց իմ տեղը, հետո մոտեցավ ու հարցրեց՝ արդյոք նարդի պետք է, ասացի՝ ոչ, հետո կրկին եկավ ու հարցրեց՝ շախմատ պետք է, հետո ծածկոց առաջարկեց: Այդ ընթացքում դուրս էի գալիս միջանցք ծխելու, եւ ուղեկցորդն այնքան ուշադիր էր իմ հանդեպ, որ իմ կողքով անցնող մարդկանց խնդրում էր չաղմկել: Այդպես հասա Մոսկվա»,-հիշել էր նա:

Ուղեւորության ավարտին ուղեկցորդն ու իր ընկերը, որը պարզվել է՝ ԱԱԾ-ում լուրջ պաշտոն է զբաղեցրել, ամբողջ ընթացքում փորձել են հասկանալ, թե որտեղ են տեսել Փելեշյանին:

«Դուք մեր կյանքը կերաք, վերջապես հիշեցինք, որ Ձեզ տեսել ենք «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմում»,-Փելեշյանին հաջողություն մաղթելիս ասել են նրանք:

Արտավազդ Փելեշյանն ուսանելու տարիներին նկարահանել է «Լեռնային պարեկ» (1964), «Մարդկանց երկիրը» (1966), «Սկիզբը» (1967) վավերագրական ֆիլմերը, որոնք առանձնանում են ուրույն ոճով եւ կինոլեզվի թարմ արտահայտչամիջոցներով: 1969-ին Փելեշյանը նկարահանել է «Մենք» ֆիլմը, որը ստացել է Օբերհաուզենի միջազգային կինոփառատոնի պատվավոր դիպլոմ, որտեղ առաջին անգամ օգտագործել է «տարածական մոնտաժի» հիմնատարրերից. նա նախընտրել է կարեւոր կադրերը տեղադրել իրարից հեռու, որոնք հնչյունների ուղեկցությամբ հանդիսատեսի վրա ունենում են առավելագույն ներգործություն: Կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը Փելեշյանին անվանել է «բացառիկ կինոհանճար»:

2021 թվականի նոյեմբերին Նյու Յորքի կինոփառատոնում (New York Film Festival-59) տեղի է ունեցել Փելեշյանի «Բնություն» ֆիլմի համաշխարհային փառատոնային պրեմիերան, իսկ 2022-ին նրա ֆիլմը ցուցադրվել է նաեւ Հայաստանում:

«Բնությունը» Փելեշյանի՝ 1993 թվականին նկարահանած «Կյանք» ֆիլմից 27 տարի անց արված առաջին կինոնկարն է, որտեղ «Տարածական մոնտաժի» արքան վերստին անդրադարձել է բնության թեմային՝ օգտագործելով Բեթհովենի, Մոցարտի, Շոստակովիչի, Տերտերյանի, Տիգրան Համասյանի երաժշտությունը:

«...Երկնքի աստղերի նման նա լուսավորում է մեզ անցյալից. նրա անցյալը լուսավորում է մեր ներկան: Ինձ համար Արտավազդ Փելեշյանը մեր ժամանակից դուրս է...»,-նշել է էքսպերիմենտալ վավերագրական ֆիլմերի ռեժիսոր Գոթֆրի Ռեջջոն:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՈՉ՝ ՄՕԿ-ԻՆ

«Եվրոպացիները՝ հանուն Արցախի» շարժումը նամակ է հղել Միջազգային օլիմպիական կոմիտեի (ՄՕԿ) նախագահին՝ 2024 թ. Փարիզում կայանալիք ամառային օլիմպիական խաղերին Ադրբեջանին մասնակցությունից զրկելու վերաբերյալ, եւ կոչ է արել ՄՕԿ-ին կոնկրետ միջոցներ ձեռնարկել այդ երկրի մասնակցության դեմ:

Ինչպես տեղեկանում ենք շարժման տարածած հաղորդագրությունից, նամակն ուղարկվել է նաեւ Ֆրանսիայի Հանրապետության նախագահին, Ֆրանսիայի ազգային օլիմպիական կոմիտեին, Ֆրանսիայի օլիմպիական խաղերի կազմկոմիտեին, Փարիզի քաղաքապետարանին, ինչպես նաեւ սպորտի, օլիմպիական ու պարաոլիմպիկ խաղերի նախարարին:

Ելնելով ԼՂ ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտման փաստից՝ «Եվրոպացիները՝ հանուն Արցախի» շարժումը ՄՕԿ-ին կոչ է արել արգելել Ադրբեջանին որպես պետություն ներկայացված լինել գալիք Օլիմպիական խաղերում եւ թույլ տալ ադրբեջանցի մարզիկներին հանդես գալ միայն չեզոք դրոշի ներքո: Այս կոչը հնչել է ԼՂ-ում 2023 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության եւ էթնիկ զտումների հետեւանքով իրենց պապենական հողերից 120.000 հայերի բռնի տեղահանման պայմաններում:

Նամակին պատասխանել է միայն Ֆրանսիայի ազգային օլիմպիական կոմիտեն՝ ընդունելով իրավիճակը, եւ նկատել, որ իր դիրքորոշումը համահունչ է Ֆրանսիայի կառավարության դիրքորոշմանը եւ նրա դիվանագիտական ջանքերին՝նշելով.

«Մենք չենք կարող անհաղորդ մնալ նման աղետի հանդեպ»:

«Եվրոպացիները հանուն Արցախի» շարժումն ակնկալում է Միջազգային օլիմպիական կոմիտեի հստակ դիրքորոշումը, քանի որ որեւէ քայլ չձեռնարկելը կխաթարի Օլիմպիական խաղերի ամբողջական նշանակությունը եւ ճանապարհ կհարթի ռազմատենչ պետությունների համար:

«Եվրոպացիները հանուն Արցախի» համաեվրոպական շարժում է, որը համախմբում է Եվրոպայի 15 երկրների հայկական համայնքների ներկայացուցչական մարմիններին: 2023թ. հուլիսին «Եվրոպացիները՝ հանուն Արցախի» շարժումը նախաձեռնել էր կոչ՝ ուղղված Եվրոպական խորհրդի, Եվրոպական հանձնաժողովի եւ Եվրոպական խորհրդարանի ղեկավարներին, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ղեկավարներին՝ ի աջակցություն ԼՂ հայ բնակչության: Այդ կոչը ստորագրել էին եվրոպական ավելի քան 500 կազմակերպություններ:

Այս շարժման առաքելությունն է մոբիլիզացնել քաղաքացիներին եւ ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ՝ ապահովելու ԼՂ-ի հայության հիմնարար իրավունքների իրացումը եւ երաշխավորումը: «Եվրոպացիները՝ հանուն Արցախի» շարժումն այս առումով բարձրացնում է իրազեկումը Եվրոպայի քաղաքական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում:

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ»

ԱՆՆԱԽԱԴԵՊ ԿՐԹԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

«Երաժշտություն՝ հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի կրթաթոշակառուները փետրվարի 1-ից 16-ը Դուբայում մասնակցել են Մերձավոր Արեւելքի դասական երաժշտության ակադեմիայի (Middle East Classical Music Academy) եւ «InClassica» միջազգային փառատոնի շրջանակներում կազմակերպված 66 վարպետության դասերի, 5 դասախոսությունների եւ ստեղծագործական հանդիպումների հայտնի պրոֆեսորների հետ, ունկնդրել են 16 դասական համերգ աշխարհի լավագույն նվագախմբերի եւ երաժիշտների մասնակցությամբ:

Վարպետության դասեր են անցկացրել հանրաճանաչ այնպիսի երաժիշտներ, ինչպիսիք են Ջուլիանո Մացոկանտեն (Giuliano Mazzoccante), Հե-Յանգ Քիմը (Hae-Young Kim), Էշլի Վասը (Ashley Wass), Ալեքսանդր Չաուշյանը (Alexander Chaushian), Մարկ Բուշկովը (Marc Bouchkov), Բեռլինի սիմֆոնիկ նվագախմբի (Berlin Symphony Orchestra) եւ Օքսֆորդի ֆիլհարմոնիկ նվագախմբի (Oxford Philharmonic Orchestra) կոնցերտմայստերները եւ ուրիշներ:

Այս կրթական փորձառության կարեւորագույն մասն են եղել «InClassica» փառատոնի համերգները, որոնց ընթացքում հանդես են եկել հանրահռչակ Բեռլինի սիմֆոնիկ նվագախումբը (Berlin Symphony Orchestra), Օքսֆորդի ֆիլհարմոնիկ նվագախումբը (Oxford Philharmonic Orchestra), անվանի դիրիժորներ Մարիոս Պապադոպուլոսը (Marios Papadopoulos), Քրիստոֆ Պոպենը (Christoph Poppen), Լուկաս Մասիասը (Lucas Macias), ինչպես նաեւ հանրահռչակ արտիստներ, ինչպիսիք են Քամիլ Թոման (Camille Thomas), Մաքսիմ Վենգերովը (Maxim Vengerov), Ջի Ջին (Zee Zee) , Մարկ Բուշկովը (Marc Bouchkov), Յոլ Ում Սանը (Yeol Eum Son), Ֆրանկ Բրալենը (Frank Braley) եւ այլք:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

● Փետրվարի 26-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Երգեհոնային երաժշտության համերգ»-ը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ կարգով է որոշվում երեխայի նկատմամբ հայրությունը:

Էմմա Հակոբյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ հայրության ճանաչման պետական գրանցման հիմքերն են՝

1) երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող մոր եւ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի համատեղ հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է հայտարարություն ներկայացնող անձից,

2) ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում մոր հետ ամուսնության մեջ չգտնվող՝ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է իրենից,

3) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը:

Եթե երեխայի ծնունդը գրանցել է օտարերկրյա պետությունը, ապա հայրության ճանաչման պետական գրանցումը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետությունում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Օտարերկրյա պետության գրանցած ծննդյան ակտային գրանցման հիման վրա կատարված հայրության ճանաչման պետական գրանցման դեպքում դիմողին տրամադրվում է հայրության ճանաչման վկայական, եւ կատարված հայրության ճանաչման պետական գրանցման մասին հաղորդվում է երեխայի ծննդի ակտային գրանցման վայր՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայրության որոշման պետական գրանցումը կատարում է գործակալությունը: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է իրականացվում հաշմանդամություն ունեցող անձի վերափորձաքննությունը:

Մելինա Այվազյան (50 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հաշմանդամ ճանաչված անձը կրկին բժշկասոցիալական փորձաքննության է ենթարկվում անձի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա կամ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ: Անձի կամ նրա ներկայացուցչի դիմումով վերափորձաքննությունն իրականացվում է հաշմանդամության խմբի կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու, անձի առողջական վիճակը վատթարանալու կամ օրգանիզմի ֆունկցիայի վերականգնման, իսկ փորձաքննական որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ հաշմանդամության խմբի որոշման սահմանված կարգի խախտման դեպքերում՝ նաեւ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օտարերկրյա պետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում կարող են անցնել բժշկասոցիալական փորձաքննություն, եթե տվյալ պետության հետ Հայաստանի Հանրապետությունն ունի համապատասխան միջպետական պայմանագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, որ կասկածի տեղիք չի տալիս:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 3	0 + 5
Կոտայքի լեռներ	0 - 3	0 + 4
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4	+ 6 + 8
Գեղարքունիք	0 - 3	0 + 4
Լոռի	0 - 3	+ 3 + 6
Տավուշ	- 1 + 2	+ 4 + 7
Արագածոտնի լեռներ	0 - 3	0 + 3
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 4	+ 6 + 10
Արարատ	+ 5 + 7	+10 + 12
Արմավիր	+ 4 + 6	+10 + 12
Վայոց ձորի լեռներ	0 - 3	+ 1 + 4
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 7	+ 9 + 12
Սյունիքի հովիտներ	+ 2 + 5	+7 + 11
Սյունիքի նախալեռներ	0 - 3	+ 3 + 6
ԼՂՀ	0 - 3	+ 4 + 6
Երեւան	+ 3 + 5	+ 7 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*